ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱԿՑԻԱՆ

20.06.2023 19:12

Այսօր ընթացավ փաստաբանների բողոքի հերթական ակցիան:

Փաստաբանները գրավոր պահանջ ներկայացրեցին ՆԳՆ նախարար Վահե Ղազարյանին՝ կոչով արմատախիլ անել բռնությունը ոստիկանության համակարգից, մասնավորապես՝ անհապաղ դադարեցնել փաստաբանի ծեծին մասնակցած ոստիկանների, ինչպես նաև Ոստիկանության Երևանի քաղաքային վարչության Կենտրոն բաժնի պետի լիազորությունները:

Վերը նշված գրավոր պահանջին 2 օրվա ընթացքում միացել է շուրջ 900 փաստաբան:

«Բռնության կիրառման արգելքի» կանոնը հատկապես պետք է պահպանվի անձի իրավունքների և ազատությունների, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության սկզբունքների հիման վրա գործունեություն իրականացնող համակարգի և դրա պաշտոնատար անձանց կողմից, իսկ բռնության ցանկացած դրսևորումը, նույնիսկ սպառնալիքը պետք է արմատախիլ արվի համակարգից՝ անկախ նրանից, թե ում նկատմամբ է ուղղված:

Ներկայացված պահանջը և դրան միացած փաստաբանների ցանկը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })